հասցե՝ Երևան 0039, Արտաշիսյան 46/1
հեռ.՝ 011303303, 010461841
mc@astvatsamayr.am

«ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐ»
ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

"SOURB ASTVATSAMAYR" MEDICAL CENTRE JSC

№ ԱԿ-275 23 05 2024թ.

Որոշում N ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/28
«ՎԱՅԹԲԵՐՐԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ

«Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) կարիքների համար դեղորայքի և բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով 08.04.2024թ. հայտարարված «ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/28» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «ՎԱՅԹԲԵՐՐԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Մասնակից) կողմից ներկայացված հայտը կազմվել է հրավերի պահանջներին անհամապատասխան, այն է՝ Հավելված 1.1-ի 6-րդ չափաբաժնում ներկայացված տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 41-րդ կետը՝ «ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/28» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) 06.05.2024թ.-ի թիվ 1 որոշմամբ որոշեց կասեցնել նիստը և առաջարկել Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները, սակայն վերջինիս կողմից շտկված փաստաթղթերը սահմանված ժամկետում չեն ներկայացվել:

Ղեկավարվելով Կարգի 42-րդ կետով, գնահատող հանձնաժողովը 08.05.2024թ-ի թիվ 2 որոշմամբ որոշեց «ՎԱՅԹԲԵՐՐԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետի համաձայն Մասնակիցը ներառվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Նույն մասում նշված

որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մասնակիցը արձանագրված անհամապատասխանությունները սահմանված ժամկետում չշտկելով խախտել է գնման ընթացակարգով ստանձնած պարտավորությունները, որը հանգեցրել է գնման գործընթացին վերջինիս հետագա մասնակցության դադարեցմանը, որոշում եմ «ՎԱՅԹԲԵՐՐԻ ԳՐՈՒՊ»-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՏՆՕՐԵՆ՝ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԶՈՀՐԱԲՅԱՆ

Կատարող՝ Ա. Խաչատրյան
Գնումների համակարգող
Հեռ. /094/ 537163